

- Ունեցեք ձեզ հետ կնքած պայմանագրի պատճենը
- Ձեզ մոտ պահեք ճամփորդական տոմսը:
- Ունեցեք որոշակի գումար ամերիկյան դոլարով կամ եվրոյով եւ մանր դրամ այն երկրի արժույթով, ուր մեկնում եք /տարադրամը կարող եք փոխանակել օդակայանում մեկնելուց առաջ/:
- Ձեռք բերեք այն երկրի ու քաղաքի քարտեզը, ուր մեկնում եք: Տեղեկացեք ձեր թռիչքուղու մասին, քանի որ երբեմն հարկ է լինում փոխել չվերթը: Հետաքրքրվեք նաեւ ճամփորդության տեսողությամբ:
- Ունեցեք այն կազմակերպությունների անունները, հասցեները եւ հեռախոսահամարները, որոնք կարող են օգնության հասնել, եթե ոչ ոք չդիմավորի օդանավակայանում, ավտոբուսի կամ գնացքի կայարանում:
- Մեկնելուց առաջ այցելեք բժշկի, բուժեք ձեր ատամները, քանի որ բուժօգնությունը որոշ երկրներում թանկ է:
- Մեկնելուց առաջ փորձեք կապեր հաստատել տվյալ երկրում ապրող մարդկանց հետ: Հնարավորության դեպքում նախապես տեղեկացրեք նրանց ձեր այցելության մասին: Կապի մեջ եղեք նրանց հետ, որպեսզի կարիքի կամ խորհրդի դեպքում նրանք պատրաստ լինեն օգնել ձեզ:
- Փորձեք կապ հաստատել ձեր հայրենի երկրում գործող կանանց եւ /կամ արտագաղթողների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ, որոնք ձեզ կտրամադրեն հյուրընկալող երկրի համապատասխան կազմակերպությունների կողմից:



Թրաֆիքինգը կամ «սպիտակ ստրկությունը» մեր օրերի ամենամոթալի եւ դժան երեւոյթներից է: Վերջին տասնամյակում այն հասել է սարսափելի չափերի: Մարդկանց առետուրը կազմակերպիչներին բերում է ահռելի եկամուտներ նվազագույն ռիսկի պայամներում: Չոհերը դատապարտված են ստորացման, բռնության, հիվանդությունների, անպատվության, վախի եւ մահվան:

Այդ պատճառով բոլորիս խնդիրն է միասնական ուժերով պայքարել այդ ամոթալի երեւոյթի դեմ եւ կանգնեցնել մարդկանց թրաֆիքինգը:

Թրաֆիքինգի դեմ ուղղված STOP NOW միջազգային ծրագիրը իրականացվում է Հունական KEDE «Հանուն խաղաղության հետազոտությունների և գործունեության կենտրոն»-ի կողմից:



KEDE Centre of Research and Action on Peace



The Project is funded by Hellenic Aid (YDAS), Greek Ministry of Foreign Affairs



AWHHE

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստել է և իրատարակել է «Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը:

375019, ՀՀ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ,
սենյակ 609
Հեռ. (+374-1)-52 36 04
office@awhhe.am
www.awhhe.am



ԴԱԴԱՐԵՑՆԵՆԵ ՍԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԿԻՆԳԸ
STOP NOW ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ի՞նչ է թրաֆիքինգը

Թրաֆիքինգը մարդկանց ապօրինի հավաքագրումն է, փոխադրումը եւ առևտուրը:

Համաձայն ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի տվյալների ամբողջ աշխարհում տարեկան ավելի քան 4 մլն կին, տղամարդ եւ երեխա ենթարկվում են թրաֆիքինգի, իսկ հանցագործ խմբերն այդ կերպ վաստակում են 5-7 մլրդ ամերիկյան դոլար: Չոհերը դատապարտված են ստորացման, բռնության, հիվանդությունների, անպատվության, վախի եւ մահվան:



Լինելով տեղեկացված եւ գզն, դուք կարող եք խուսափել թրաֆիքինգի գոհ դառնալու սարսափելի վտանգից:

Դուք մեկնում եք արտերկիր

Ժամանակակից ստրկությունը սկսվում է, երբ մշտական գործազրկությունը եւ ծայրահեղ աղքատությունը հարկադրում է մարդկանց թողնել հայրենի երկիրը եւ փնտրել ցանկացած վարձատրվող աշխատանք արտերկրում:

Արտերկիր կարող եք մեկնել տարբեր պատճառներով՝ արկածներ փնտրելու, գումար վաստակելու կամ ամուսնանալու, երկրում ծավալված պատերազմական գործողություններից հեռու մնալու համար որպես օրինական կամ անօրինական արտագաղթող:

Գաղթյալ կանանց մեծ մասն արտերկիր է մեկնում ընտանիքի տնտեսական վիճակը բարելավելու կարիքից դրդված եւ ընտանիքի անդամների կյանքը ծրագրավորելու լավագույն նկատառումներով:

Արտագաղթող կանայք աշխատանք են գտնում տարբեր ճանապարհներով, բայց, ամենից հաճախ, գործակալի կամ գործակալության միջոցով, որը նրանց խոստանում է լավ աշխատանք եւ նորմալ վարձատրություն:

Սակայն որոնողներից քչերն են բավականաչափ փորձառու եւ տեղեկացված հանդիպող բոլոր հնարավոր վտանգների մասին:

Ցանկացած իրավիճակում արտագաղթողները պետք է պատրաստ լինեն պաշտպանել իրենց իրավունքները:

- Փորձեք հնարավորինս շատ տեղեկատվություն ձեռք բերել ձեզ աշխատանք առաջարկող ընկերության ու ձեր գործատուի մասին նախքան մեկնելը:
- Դիմեք տվյալ երկրի դեսպանատան աշխատանքի բաժին եւ ճշտեք գործատուի կամ տվյալ կազմակերպության իրավական լինելը:
- Կապ հաստատեք այն խմբերի եւ կազմակերպությունների հետ, որոնք կարող են տեղեկատվություն եւ օժանդակություն ապահովել գաղթյալ աշխատողներին այդ երկրում:

Տեղեկատվության հնարավոր աղբյուրները Հայաստանում

- Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
- Արտաքին գործերի նախարարություն
- Հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում են գաղթականների եւ նրանց աշխատանքի հարցերով
- Հյուրընկալող երկրի դեսպանատուն կամ հյուպատոսություն:

Չգուշացեք պարտքերի պատճառով կախվածության մեջ ընկնելուց

Անհրաժեշտ քայլեր մեկնելուց առաջ

- Ձեր ընտանիքի անդամների եւ ընկերների մոտ թողեք ձեր ճամփորդական փաստաթղթերի՝ անձնագրի եւ անձը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները եւ ձեր լուսանկարը:
- Հարազատներին եւ մտերիմներին տվեք նաեւ ձեզ աշխատանք առաջարկած ընկերության կամ գործատուի հասցեները:
- Փորձեք սովորել տվյալ երկրի հիմնական լեզվով որոշ արտահայտություններ:
- Ունեցեք գաղթյալ աշխատողներին օգնող կազմակերպությունների անուններն ու հասցեները:
- Ձեզ հետ ունեցեք այն երկրի դեսպանատան կամ հյուպատոսության հեռախոսահամարը, ուր մեկնում եք: /Այդ տեղեկատվությունը ձեզ կարող է տրամադրել Արտաքին գործերի նախարարությունը կամ գաղթյալների հարցերով զբաղվող կազմակերպությունները:/